ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«8» հուլիսի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի՝ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են համայնքի ավագանու 15 անդամներից՝ Նորայր Սանթրոսյանը, Հայկ Վարդանյանը, Լուսինե Երիցյանը, Գոռ Մարկոսյանը, Վարսենիկ Բլեյանը, Արկադի Գևորգյանը, Կարինե Մարտիրոսյանը, Գասպար Բաղդասարյանը, Մետաքսյա Մարգարյանը, Գրիշա Կոբալյանը, Աննա Մարտիրոսյանը:

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, քանի որ նիստին մասնակցում են ավագանու անդամների կեսից ավելին:

Նիստը վարող՝ համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյան:

Արձանագրող՝ Սոնա Հովհաննիսյան:

Համայնքի ավագանու նիստին մասնակցում են՝ Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կարեն Խաչատրյանը, Ջովք գյուղի վարչական ղեկավար Նորիկ Գևորգյանը,աշխատակազմի աշխատակիցներ, «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Բաղալյանը:

Արձանագրող Սոնա Հովհաննիսյանը հրապարակեց, որ ավագանու անդամներ Հուսիկ Գրիգորյանը և Արթուր Պապանյանը տեղեկացրել են բացակայության մասին, այն է՝ աշխատանքի բերումով գտնվում են հերթապահության մեջ, Գայանե Մելքումյանը գտնվում է արձակուրդում և բացակայում է ՀՀ-ից, իսկ Քյալո Հասոյանը, որպես եզդի ազգաբնակչության ներկայացուցիչ, գտնվում է սարատեղում, այդ իսկ պատճառով թվով 4 ավագանու անդամներ չեն կարող ներկայանալ նիստին:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 148-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6. «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:
7. Կոտայքի թեմի առաջնորդարանին ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:
8. Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքը (Ձորաղբյուր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքը (Ջովք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին:
11. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
12. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

13. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 11-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ և 65-րդ հոդվածների,

1. ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 8-ի՝ արտահերթ թիվ 7 նիստի օրակարգը.

1) Համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 148-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5) «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:

6) Կոտայքի թեմի առաջնորդարանին ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:

7) Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքը (Զորաղբյուր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին:

9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքը (Զովք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին:

10) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

11) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 11-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Վարսենիկ Բլեյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով,

ՈՐՈՇՎԵՑ - Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

3. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Լուսինե Երիցյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունիսի 16-ի թիվ 01/03/05659-2025 և հունիսի 20-ի թիվ 01/03/05915-2025 գրությունները, ինչպես նաև «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի հունիսի 10-ի թիվ ՄՇ/19405 գրությամբ ներկայացված խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղական վճարների 2025 թվականի տեսակներն ու դրույքաչափերը, դրանց գծով արտոնությունները սահմանելու մասին» թիվ 150-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 20-րդ կետով սահմանված համայնքի տարածքում ինժեներաերկրաբանական ենթակառուցվածքների (վերգետնյա և (կամ) ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերակառուցման և այլն) նպատակով շինարարության թույլտվության համար տեղական վճարի վճարումից ազատել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

4. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Աննա Մարտիրոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ, 27.1-ին և 31-րդ հոդվածների դրույթները,

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

5. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 148-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գասպար Բաղդասարյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային

դրույքաչափերը հաստատելու մասին» N 148-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի «Աշխատակիցների քանակը» տողում «47» թիվը փոխարինել «50» թվով, աղյուսակի 9-րդ, 11-րդ և «ԸՆԴԱՄԵՆԸ» տողերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

9	Աղբատար մեքենայի բանվոր	6	260000	1560000
11	Սանիտարական մեքենայի բանվոր	4	210000	840000
	ԸՆԴԱՄԵՆԸ	***49.5***	***4125000***	***8915000***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 9-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ - «ԿՈՏԱՅՔ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Կարինե Մարտիրոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով «Կոտայք» ջրօգտագործողների ընկերության կողմից 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ԳՀ1-04/289 գրությունն այն մասին, որ Ջրվեժ համայնքի հողատարածքներին ոռոգման ջուր մատակարարող խորքային հորի պոմպն այրվել և շարքից դուրս է եկել, ինչի արդյունքում առաջացել է անհրաժեշտություն հիմնանորոգման,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ իրականացնելու ծախսեր բյուջեի «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածից և «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությանը հատկացնել 1 300 000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ Ջրվեժ համայնքի հողատարածքները ոռոգող խորքային հորի պոմպի հիմնանորոգման աշխատանքների աջակցման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

7. ԼՍԵՑԻՆ - ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Վարսենիկ Բլեյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ջրվեժի Հայ Առաքելական Սուրբ Կաթողիկե եկեղեցու հոգևոր հովիվների՝ 2025 թվականի հուլիսի 4-ի գրությամբ ներկայացված խնդրանքը՝ համայնքի անապահով ընտանիքների երեխաների համար ամառային ճամբար կազմակերպելու նպատակով ֆինանսական աջակցություն ստանալու մասին,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ իրականացնելու ծախսեր բյուջեի «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածից և Կոտայքի թեմի առաջնորդարանին հատկացնել 645 000 (վեց հարյուր քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ Ջրվեժի Հայ Առաքելական Սուրբ

Կաթողիկե եկեղեցու կողմից համայնքի անապահով ընտանիքների երեխաների համար ամառային ճամբար կազմակերպելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

8. ԼՍԵՑԻՆ - ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի հողային հաշվեկշռին՝ 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

9. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԸ (ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ) ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՈՏԱՅՔ-10 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Արկադի Գևորգյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 10–ի թիվ 2/փ-174 դրական եզրակացությունը,

ՈՐՈՇՎԵՑ 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքը (Ձորաղբյուր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում (Ջրվեժ համայնքի (Ձորաղբյուր բնակավայրի) գոտևորման նախագծի մասով) կատարել փոփոխություն և Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող՝ քաղաքացի Վահագն Արմենի Սիմոնյանի սեփականությունը հանդիսացող 07-042-0379-0010 կադաստրային ծածկագրով 0,09723 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

10.ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԸ (ԶՈՎՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ) ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՈՏԱՅՔ-10 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԶԵԿՈՒՅՑԵՑ – աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 17–ի թիվ 2/փ-192 դրական եզրակացությունը,

ՈՐՈՇՎԵՑ 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքը (Զովք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում (Ջրվեժ համայնքի (Զովք բնակավայրի) գոտևորման նախագծի մասով) կատարել փոփոխություն և Ջրվեժ համայնքի Զովք գյուղում գտնվող՝ քաղաքացի Էդուարդ Ռոբերտի Թադևոսյանի սեփականությունը հանդիսացող 07-030-0101-0210 կադաստրային ծածկագրով 0,803675 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,315152 հա մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ արդյունաբերական օբյեկտների հողերի կատեգորիա՝ արտադրական կառուցապատում իրականացնելու նպատակով:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

11. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՅՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Լուսինե Երիցյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն և 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ 55» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 10-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը, հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0010-0015 կադաստրային ծածկագրով 226,9 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված հողամասին կից՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Մասիսի փողոցի թիվ 30 հասցեի 1552,34 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Ինեսսա Սարիբեկի Գաբայանի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20092019-07-0055 վկայական, տրված՝ 2019 թվականի սեպտեմբերի 30-ին) խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0010-0015 կադաստրային ծածկագրով 226,9 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0010-0015 կադաստրային ծածկագրով 226,9 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Ինեսսա Սարիբեկի Գաբայանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Մասիսի փողոցի թիվ 30 հասցեի 1552,34 քառ.մետր մակերեսով բնակավայրերի

բնակելի կառուցապատման հողամասին կից, իր կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0010-0015 կադաստրային ծածկագրով 226,9 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի ձևով, որպես ընդլայնում, կադաստրային արժեքով, որը կազմում է 1 550 703 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամ, օտարել Ինեսսա Սարիբեկի Գաբայանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

12. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՅՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Հայկ Վարդանյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն և 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նեֆրիտ Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի փետրվարի 14-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը, հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0028 կադաստրային ծածկագրով 22,1 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված հողամասին կից՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0015 կադաստրային ծածկագրով Այգեգործական զանգվածի թիվ 31 հասցեի 515,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հովսեփ Գրիգորի Խաչատրյանի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21052024-07-0204 վկայական, տրված՝ 2024 թվականի մայիսի 21-ին) խնդրանքը, ինչպես նաև Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0016 կադաստրային ծածկագրով 216-րդ թաղամասի թիվ 17 հասցեի 606,4 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Արտակ Նորայրի Մկրտումյանի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24122024-07-0083 վկայական, տրված՝ 2024 թվականի դեկտեմբերի 22-ին) համաձայնությունն այն մասին, որ իր հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0028 կադաստրային ծածկագրով 22,1 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն օտարվի այն փաստացի տիրապետող և օգտագործող Հովսեփ Գրիգորի Խաչատրյանին,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0028 կադաստրային ծածկագրով 22,1 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0028 կադաստրային ծածկագրով 22,1 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Հովսեփ Գրիգորի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0015 կադաստրային ծածկագրով Այգեգործական զանգվածի թիվ 31 հասցեի 515,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին կից, իր կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0216-0028 կադաստրային ծածկագրով 22,1 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի ձևով, որպես ընդլայնում, կադաստրային արժեքով, որը կազմում է 98 164 (իննսունութ հազար մեկ հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, օտարել Խաչատրյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

13.ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գասպար Բաղդասարյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «ԻՆԷՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի փետրվարի 19-ին ներկայացված տրանսպորտայի միջոցների շուկայական արժեքների գնահատման հաշվետվությունները և համայնքի ղեկավարի առաջարկը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերից 2025 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարման առաջարկով շարժական գույքերի ցուցակը հաստատելու մասին» N 53-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 11
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԻՇԱ ԿՈԲԱԼՅԱՆ

ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ն.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Արձանագրող՝ *Ս.Հովհաննիսյան*